ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Տնօրինություն 13.03.2024թ. թիվ 06 որոշմամբ
(գործում է 13.03.2024թ.-ից)

«SOCIAL MED CHECK-UP» ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Խմբագրություն՝ MX01
(Ակտիվի դաս՝ հրապարակային)

1. Ի՞ՆՉ Է «SOCIAL MED CHECK-UP» ԾՐԱԳԻՐԸ

«SOCIAL MED CHECK-UP»-ն առողջության ապահովագրության ծրագիր է՝ նախատեսված Հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի համաձայն եկամուտները հայտարարագրելու պարտավորություն ունեցող ֆիզիկական անձանց և նրանց ընտանիքի անդամների (կին/ամուսին, ծնող, զավակ) համար.

2. Ի՞ՆՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ՆԵՐԱՌՈՒՄ ԾՐԱԳԻՐԸ

2.1. ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԲՈՒԺՁՆՆՈՒՄ* */տարեկան մեկ անգամ/*

- ✓ Խորհրդատվություններ.
  - Թերապևտի խորհրդատվություն
  - Գինեկոլոգի կամ ուրոլոգի խորհրդատվություն
  - Ակնաբույժի խորհրդատվություն
- ✓ Գործիքային հետազոտություններ.
  - Որովայնի օրգանների ՈՒՁՀ
  - Փոքր կոնքի օրգանների ՈՒՁՀ
  - Վահանաձև գեղձի ՈՒՁՀ
  - Կրծքագեղձի ՈՒՁՀ
  - Էլեկտրասրտագրություն
  - Էխոսրտագրություն
- ✓ Լաբորատոր հետազոտություններ.
  - Արյան ընդհանուր քննություն
  - Մեզի ընդհանուր քննություն
  - ALT ալանինտրանսամինազա
  - AST ասպարտատտրանսամինազա
  - GGT գամմագլյուտամինտրանսֆերազա
  - Կուագուլոգրամմա
  - Գլյուկոզայի մակարդակի որոշում արյան մեջ
  - Լիպիդային պրոֆիլ /խոլեստերին/
  - PAP-քսուք (կանանց համար)
  - PSA Պրոստատ սպեցիֆիկ անտիգեն (տղամարդկանց համար)

** Սույն ապահովագրության շրջանակներում հատուցման ենթակա են Ընկերության գործընկեր բժշկական հաստատությունների ցանկից Ապահովագրված անձի կողմից նախապես ընտրված մեկ բժշկական հաստատությունում ստացված ծառայությունները:*

2.2. ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ապահովագրողն իրականացնում է արտաքին ազդեցություն ունեցող հանկարծակի իրադարձության հետևանքով ստացած վնասվածքների բուժման ծախսերի հատուցում՝ ապահովագրության պայմանագրի ընթացքում առավելագույնը 300 000 ՀՀ դրամի չափով:

3. Ի՞ՆՉ ԾԱԾԿՈՒՅԹ Է ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍԸ

Ապահովագրական գումար՝ **1 300 000 ՀՀ դրամ**

Ապահովագրավճար՝ **50 000 ՀՀ դրամ**

4. Ի՞ՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- ✓ Ապահովադրի անձը հաստատող փաստաթուղթ,
- ✓ Ապահովագրվող անձի անձը հաստատող փաստաթուղթ,
- ✓ Ընտանիքի անդամի դեպքում՝ հիմնավորող փաստաթուղթ, մասնավորապես՝

- ամուսնու դեպքում՝ ամուսնության վկայական.
- ծնողի դեպքում՝ ծնողի՝ անձը հաստատող փաստաթուղթ և հայտարարատուի ծննդյան վկայական.
- զավակի դեպքում՝ ծննդյան վկայական.
- որդեգրողի, որդեգրվածի դեպքում՝ որդեգրելու կամ որդեգրվելու համապատասխան հիմքը հաստատող փաստաթուղթ:

5. ԾՐԱԳՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ✓ Շուրջօրյա հեռախոսակապ բժիշկ փորձագետի հետ,
- ✓ Զեղչերի տրամադրում գործընկեր բժշկական հաստատություններում վիրահատական, ատամնաբուժական, ֆիզիոթերապևտիկ և օպտիկական ծառայությունների համար,
- ✓ Բժշկական ծառայությունների ստացման գործընթացի կազմակերպում,
- ✓ Բժշկական հաստատությունների կողմից տրամադրված բժշկական ծառայությունների որակի վերահսկում:

Ծրագիրը կարգավորվում է Ընկերության Խորհրդի կողմից հաստատված «Առողջ անհատ» ապահովագրության պայմաններով: